Հավելված
Հայաստանի Հանրապետության հանրային
ծառայությունները կարգավորող հանձնաժողովի
2024 թվականի ———— ——— -ի № -Ն որոշման

Հավելված №4
Էներգետիկայի բնագավառում
գործունեության լիցենզավորման կարգի

# ԳՈՐԾԱՐԱՐ ԾՐԱԳՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ

1. **Գործարար ծրագիրը պարունակում է առնվազն հետևյալ տեղեկությունները՝**

1) Կառուցման նպատակը, կառուցվող օբյեկտի անունը, ընդհանուր բնութագիրը և տեխնիկատնտեսական ամփոփ ցուցանիշները, շինությունների և կառույցների հիմնական բնութագրերը.

2) Շուկայի ուսումնասիրություն, արտադրանքի (ծառայության) իրացման հնարավորությունները.

3) Տեղեկություններ տեղադրվող հիմնական սարքավորումների վերաբերյալ (այդ թվում՝ մակնիշ, հզորություն), այդ սարքավորումների արտադրողների և դրանց արժեքների մասին, տեխնիկական և տնտեսական հիմնավորում.

4) Ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով օբյեկտի տեխնիկատնտեսական ցուցանիշների համալիր վերլուծության արդյունքներով օպտիմալ տարբերակի ընտրության հիմնավորումը.

5) Կառուցվող օբյեկտի տեղաբաշխման սխեման, որի վրա նշված են տրանսպորտային հաղորդակցության ուղիներին և ճարտարագիտական ցանցերին միացման կետերը, օբյեկտի հատակագիծը.

6) Կառուցման ժամանակացույցը՝ ըստ փուլերի (ներառյալ՝ կայանի կառուցման նախագծի կազմման և փորձաքննությունների անցկացման ժամկետները).

7) Կառուցման աշխատանքների արժեքը բացված տեսքով.

8) Ֆինանսավորման հնարավոր աղբյուրները և ֆինանսավորման պայմանները.

9) Հիմնական արտադրանքի ինքնարժեքի հաշվարկը.

10) Ներդրումների արդյունավետության գնահատման ցուցանիշներ (այդ թվում՝ շահութաբերության ներքին նորմա, մաքուր բերված արժեք, հետգնման ժամկետ):